ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հոսքաչափերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 19 ապրիլի 2019 թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

15.04.2019թ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Լոկատոր» ՓԲ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ Մասնակցից պահանջվել են ներկայացնելու առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ իրականացրած նմանատիպ պայմանագիր (պայմանագրեր), տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը նույնպես ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և արձանագրեց հետևյալը՝

- Ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիրը ներկայացվել է կից ռուսերեն տարբերակով, որում բացակայում են ջրահոսքի արագության և չափման տիրույթի վերաբերյալ տեղեկությունները:

Ներկայացված նմանատիպ պայմանագրում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝

- չունի ժամկետանց հարկային պարտավորություններ,
- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորություններ չունի:

Մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցին ծանուցել ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունները և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնել հայերեն տարբերակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան